


# Ի դեպ

Ռուսոմոս Ռուվանեան



Պայքարային ժր

3

3

ՅԵՏՅՆՑՈՒՄ  
Գէւորգ Մանոյեան

7

ԺԱՄԱՆՑ  
Լենա Թազուրեան

11

ԿԱՏՈՒՆԵՐՈՒՆ ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԸ  
Սոնիա Սանան

15

ՈՏԱՆԱԻՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ  
Գուրգէն Արզումանեան

20

ՀԵՌԱՆԿԱՐ  
Հրայր Անմահունի

27

ՔԱՂԱՔԸ ՄԷՋՍ ԿԸ ՔԱԼԷՐ  
Րաֆֆի Աճէմեան

Խմբագրեց՝ Էլիզաբեթ Գրիգորեան  
E teb ■ 2354 Pennerton Dr. ■ Glendale, ■ CA 91206  
eteb@earthlink.net ■ www.eteb.com  
© 2006 E teb

Արդէն իսկ վախցնելու յատկութիւնը կորսնցուցած սուլոցը սկսած էր մտահոգիչ կերպով մօտենալ: Շատ լսած էինք մեր վրայէն անցնող եւ քիչ մը հեռու աւեր սփռող հրթիռներուն սուլոցները, բայց այս մէկուն ձայնը մարելու մօտ էր ու մեզմէ շատ հեռանալու նպատակ չունէր:

Ապաստանարանի մը վերածուած առաջին յարկի բնակարանին նախկին նստասենեակին մէջ հաւաքուած աւելի քան քսան հոգին իրենց շունչերը բռնած կը սպասէին այս թնճուկին լուծման:

Պատասխանը շատ չուշացաւ, վերջապէս հրթիռները բաւական արագ կը ճամբորդեն: Ամբողջ շէնքը յատակէն ուժգնօրէն ցնցուեցաւ, սակայն ասով ակնկալուած հարցումին պայթումը կ'ուշանար:

Ամէն մարդ շուարած իր շուրջը նայելով ստուգեց, որ ոչ ոք վիրաւորուած է, որմէ անմիջապէս ետք սկսան անխուսափելի վլվլուկը ու աննպատակ շարժումները, որոնք կը յիշեցնէին հաւնոցի մէջ սեղմուած հաւերու շարժումները:

Վերջապէս մեր հայախօս մարտնի դրացին էր, որ ամենածանր ռմբակոծումներուն ընթացքին իսկ սիրտ կ'ունենար պոռալու «ո՛վ որ վարն է, թող վեր ելլէ», կապկելով այդ կոչին հակառակը պոռացող զինեալները, լուր բերաւ, թէ հրթիռը՝ մեզմէ միայն քանի մը մեթր վար, պայթելու կը սպասէ ինքնաշարժի նորոգութեանց

խանութին մուտքին, ուր տուփերով ներկեր եւս կը սպասէին:

Առաջին հակազդեցութիւնը հաւաքական խորունկ շունչ մըն էր, որմէ ետք՝ նոր իրարանցում մը: Բարեբախտաբար դիւրին եղաւ հրթիռին չէզոքացումը, այդ միջադէպը յիշողներ ձգելով իր ետին:

Ամբողջ մէկ շաբթուան համար մնայուն ապաստանարանի մը վերածուած նստասենեակին մէջ պառկած կամ նստած վիճակի մէջ մէկ շաբաթ միասին ապրելով միասնաբար կը ճաշէինք, հետաքրքրական պատմութիւններով եւ վտանգներու մէջէն մեզի հասած հացին մէջ պահածոներ փաթեթելով եւ ուտելով:

Ելեքտրական հոսանքը արդէն իսկ չէր սպասուեր, սակայն երբեմն պաշտօնեայի մը կողմէ կոճակի մը մէկ դարձը գոնէ մէկ-երկու ժամուան համար տօնական միջնորոտ մը կը ստեղծէր փափագի թուղթ կամ նարտի խաղալու համար իսկ տեղ չունեցողներուս մօտ: Նաեւ, ձայնասփիւռին հաղորդած ռմբակոծումներուն մանրամասնութիւններուն մէկ մասը կրնայինք պատկերասփիւռէն տեսնել ու նոր կապով մը կը վերամիանայինք աշխարհին:

Փողոց իջնելու մասին մտածելն իսկ կարելի չէր: Մինչ պատերազմին սկզբնական օրերուն, երբ ձայները հեռուէն կը լսուէին, ծանր ռմբակոծումները ուրախութիւն կը պատճառէին պայթումներուն մէջ զպրոցէն հեռու մնալու լոյսը տեսնող եւ հողէ դաշտին վրայ ֆուլթպոլ խաղալու առիթը փնտռողներուս մօտ, այս

անգամուռն հրթիռները կորսնցուցած էին ուրախութիւն սփռելու իրենց յատկութիւնը եւ շարժապատկերի պատտառը պատուելով՝ սկսած էին շօշափելի վնասներ հասցնել:

Մեր դիմացի բնակարանին մէկ մասը քանդուած էր, սեւ մուխով պատելով մեր եւ մեր դրացիներուն բնակարանները, անշուշտ քանդելով նաեւ ապակիներ ու արդէն իսկ անկարեւոր դարձած հայելիներ: Յակոբը ստամոքսէն վիրաւորելով հիւանդանոց փոխադրուած էր, առաջին անգամ ըլլալով երես մը տալով պատերազմի զոհերուն եւ վիրաւորներուն:

Ուրիշներ պիտի ըսէին, որ նման դէպքեր գիրենք չափահաս դարձուցած են, սակայն պարագան այդպէս չէր ինծի համար:

Այս բոլորը բնականաբար շատ լաւ նիւթ պիտի ըլլային ակումբին մէջ իրենց ամէնօրեայ անպաշտօն գեկուցումներուն, երբ միայն քանի մը թաղ անդին գլանուող, սակայն ներկայիս աշխարհին միւս կողմը ցատկած ակումբը հասնելու բախտը նորէն բացուէր: Վերջապէս կատակ չէր հրթիռի մը հետ այսքան մօտիկ շրջումէ մը ետք խօսելու առիթ ունենալ:

Խանութիւն ծակ տարապան վստահաբար երկար ատեն այդպէս պիտի մնար, առիթ ընծայելով ինծի նման բախտաւորներուս, որ իրեւ զբօսաշրջիկներու առաջնորդ հոն բերէինք մեր ընկերները, ցոյց տալու համար, թէ նոյն-իսկ ամենաարդիական հրթիռները երբեմն խիղճ կ'ունենան, կամ պարզապէս խոնաւութեան զոհ կ'երթան:

Սակայն երբ աւետեաց օրը հասաւ եւ ժամանակաւոր խաղաղութենէն օգտուելով կրցանք քարերուն, թուղթերուն, ապակիներուն, յիշատակներուն եւ փոշիներուն վրայէն անցնելով ակումբ հասնիլ, ամէն ինչ մոռցուած էր արդէն եւ բոլորին գլխաւոր մտահոգութիւնը փինկ-փոնկ, «Ռիսք» կամ «Հէնտ» խաղալ կամ յաջորդ «ռէլի փէյփըր»ը կազմակերպելն էր:

Վերջապէս բոլորս ալ աւելի ուշ, շատ ժամանակ պիտի ունենայինք մեր կեանքը ընդհատած, բայց միաժամանակ մեզի աւելի արագօրէն հասունցուցած պատերազմին մասին մտածելու:

Ծրագրուած կամ ոչ, մեր ըրածը անմիջական անցեալը մոռնալու փորձ մըն էր, որ այդ տարիքին բարեբախտաբար յաճախ կը յաջողէր, որովհետեւ տակաւին շատ բաներ ունէինք յայտնաբերելու, կամ աւելի ճիշդ, մեր հորիզոնները շատ աւելի ընդարձակ էին, կաղապարներէ զուրկ:

Գ.Է.Որոզ Մանոյեան

~ ԺԱՄԱՆՑ ~

Վերջի վերջոյ իրաւունք ունէ՞ր ան՝ ճի՛շդ է որ ուշ թէ՛ կանուխ բոլորս ալ կը հասնինք, պէ՛տք է հասնինք այդ պահուն, այդ սոլիդէր պահուն ուր պիտի անդրադառնանք եղե՛ր թէ անպատասխան մնացած հարցումներուն բեռէն կարելի է ձերբազատուիլ, կարելի է, եղե՛ր, առանց հասկնալու ինչո՞ւն, ինչպէ՞սը, ո՞ւրը, ե՞րբը... պահ մը որուն ընթացքին կարելի է ըլլալ, եւ ալ աւելի քան ըլլալ մը, ըլլալ համերաշխ մենքզմեզ հետ: Կարե՞լի է մենքզմեզ ընկալել այնպէս ինչպէս չէինք ըրած, այնպէս ինչպէս չէինք կրնար ընել. կարե՞լի է մտքին անընդհատ ընդլայնող երեւիցէ չյանգող հորիզոններէն ալ անդին (կամ ասդին) գտնել խաղաղութիւն մը, անդորրութիւն մը ուր մտածումներու ժխտը յանկարծ ալ չկա՛յ, ու էութիւնը՝ է, պարզա՛պէս է, իր բոլոր մերկութեամբ... կարե՞լի է եղեր...

Այդպիսի պահի մը կարելիութիւնն էր կարծես որ հազիւ թէ գուշակած էի այդ առաւօտ: Կանուխ էր, շա՛տ կանուխ, ժամը հազիւ առաւօտեան երեքուկէսն էր. չորս դիւս զգաստ լուռութիւն մը կը տիրէր. Պէյրութի այդ ամառնային անտանեղի յետմիջօրէներու տաք ու խոնավ լուռութիւնը չէր – արեւու հասուն ճառագայթներէն թրմրած ու ծոյլ լուռութիւն. այլ լարուած, պրկուած, ու բանով մը բեղուն ամայի լուռութիւն մը. «բան մը պիտի պայթի» լուռութիւն մը, եղելական եղերական պահ մը: Գոնէ այդպէս կը թուէր ըլլալ: Արեւելքէն հազիւ թէ

ամօթխած քանի մը ճառագայթ գգուչօրէն կը համարձակէին պատկերէն ներս սպրդիլ. արեւմտեան կողմը տակաւին մութ գիշեր էր: Գարաւաճիոյ պաստառ մըն էր աչքերուս առջեւ պարզուող, լոյսի ու մթութեան խաղերով, դերակատարներէ պարպուած: Պէյթ Մէրիի այդ երրորդ յարկի պատշգամէն կախուած, կը սպասէի: Վկայ մըն էի բանի մը, դէպքի մը, որ տակաւին պէտք էր պատահէր. շա՛տ կանուխ հասեր էի պատահելիքին վայրը կամ արդեօ՞ք շատ ուշ: Առաւօտեան օդը հաճելի էր ծծել. աջ ձախ կը դիտէի, կը սպասէի, աչքերս հազիւ թէ կը զանազանէին ձորի մը մթութիւնը լերան մը պարզուող բարձունքէն: Օդէն կախուածի մը պէս, հոն էի. պարզապէս:

Բայց արդէն իսկ պահը աւարտած էր, մթնշաղը վերափոխուած էր, լոյսը բարձրանալով կը ծածկէր մթութեան անորոշութիւնը, յայտնաբերելով ծանօթ տեսարան մը. քիչ ետք, աքաղաղն ալ պիտի կանչէր միօրինակութեան վերադարձը: Ես ալ շալս ուսերուս քաշելով, կարծես յուսախաբ, վերստին ներս պիտի մտնէի տարջընի ու խունկի բոյրերով ողողուած պատմութեան ներս. քիչ ետք արդէն նոր օրուան կրկնուող առաւօտեան արարողութիւնը տեղի պիտի ունենար. թրքախառն հայերէնի մեղմ նախադասութիւնները համով պիտի իջնէին թանձր սեւ սուրճին մէջ թաթխուած biscuit Marie ներով:

Ռատիօմեքենայէն արդէն աշխարհի չորս ծագերէն սփռուող ալիքները ննջասենեակէն ներս պիտի խու-

ժէին. երբ փնտռուած կայարանը գտնուէր, շունչերնիս պիտի բռնէինք ու լարուած մտիկ ընէինք. հոնկէ՞ պիտի գար միսիթարութիւնը լիբանանի եղբայրակցական կու-ւին, քանդուած կեանքերուն պատասխանը, միշտ յետա-ձգուած խաղաղութեան մը խոստումը: Քաղաքական լուրերու այս հակիրճ պահէն ետք Նարեկներն ու ժամա-գիրքերը կը բացուէին, սրբուհի Ռիթայի իննօրեաններ կ'արտասանուէին: Յոյս չկա՛ր: Ձեռքերնէս լո՛ւնչ կ'ելլէր որ: Ափ մը արմաններ սա արար երկրին մէջ բռնուած, մէջ մը մարօնիթները մեզ դուրս կը քշէին, մէջ մը շիթ-ները, մէջ մը պաղեստինցիներուն կողքին զօրավիզ կը կանգնէինք, մէջ մըն ալ հրեաներուն յաղթական լիբա-նանէն ներս մուտքին առիթով տօնակատարութիւններ կը սարքէինք: Մեր կուրը չէր, ոչ ալ մեր պայքարը: Սա-կայն հոս ապաստանած էին մեր տէտէներն ու տէտէմա-ները. ա՞ս ալ, այսքա՞նն ալ մերը չըլլա՞ր...

Վահրամը կեսարացի էր. իր ուղին Եգիպտոսէն անց-նելով յանգած էր Լիբանան. ուղեւորութեան մանրա-մասնութիւնները լուռ ու սեւ նայուածքի մը ետին պահ-ւած կը մնային. իսկ Վեհանուշը Այնթապէն էր, մեծ-հայրիկը ուսուցիչ եղած էր եւ գիրք հրատարակած էր: Վերջակէտ: Աւելին չէինք գիտեր, ո՛չ ալ պիտի գիտ-նայինք:

Կէսօրէ ետքերը, գորգի մը հինցած մէկ անկիւնը գիրկը քաշած, ժամերով կը նստեր պատշգամը, նախ թուղթի մը վրայ քառակուսի գիծեր քաշելով գորգին մանր հիւսքը պատկերի վերածելով, ապա գունաւոր

դերձաններ քաշելով օղակները կը լեցնէր. ասեղը կը բարձրանար ու կ'իջնէր, գոյները կը բազմանային, գորգը կեանք կ'առնէր: Ժամանակը կ'երկարէր կ'երկա-րէր, ոգորկ կը դառնար, մինչ մետաքսը կը բանէր:

Բայց ո՞վ որո՞ւ կը բանէր: Միտք սիրտ ջիղ ու մար-մին, օղակ առ օղակ, ժամանակը կը պարպուէր իր իմաս-տէն մինչ գորգը կեանք կ'առնէր. անհանդուրժելի դար-ձած վայրկեաններ սպասման. բայց ինչի՞ սպասում. ին-չի՞ մասին կը մտածէր, յետմիջօրէի այդ թանձր լուռ պահերուն ընթացքին երբ ժամացոյցին ծանր թիւք թաքը խուլ կ'արձագանգէր: Լռութեան խաւերուն միջեւ թաքնուած լարուածութիւն մը կար, պրկուած պոռթ-կում մը. օղակ առ օղակ ան կը ծածկուէր, կը խեղդուէր, վայրկեանները ժամեր կը հիւսէին մինչ ժամանակը կը բանէր անոր յոգնած մարմինն ու աչքերը, ասեղէն ցա-ւոդ մատները: Ասեղը կը բարձրանար ու կ'իջնէր ու ամէն մէկ հանգոյցով կ'ամրապնդէր լռութեան շղթան. բայց ի՞նչ էր հարցը, ո՞րն էր հարցումը, այդ նոյնիսկ կարելի չէր արտասանել, պարզապէս փորձել տեսնել ծայրը այդ դերձանին, որմէ ամէն ինչ կախեալ դարձած էր, կարծես երբ այդ գորգին նորոգումը աւարտէր, ա-մէն ինչ պիտի աւարտէր, խոնաւ, մունջ ու ծանր այդ յետ-միջօրէններէն ալ պիտի ձերբազատուէինք: Բայց սա անիծեալ գորգին աշխատանքը երբեւիցէ չէր աւարտեր

~ ԿԱՏՈՒՆԵՐՈՒՆ ՎԵՐՁԻՆ ԸՆԹՐԻՔԸ ~

Ս. Արեանիկ

Պուրճ Համուտը լուած է:

Ժամը մէկ է: Կէս գիշեր:

Թաղին ծայրը կատուները միս մինակ  
տիեզերքի մուկին դէմ փամփուշտի պէս մլաւիւններ  
կ'արձակեն  
աղբակոյտի մնացորդին մէջ ինկած:

Պուրճ Համուտը լուած է:

Կոյր սրճեփի ծեր կառքէն

սուրճի հոտը թաղը ամբողջ բռներ է,

այրած սեւցած սուրճի հոտը

առաւօտեան սուղ-սուղ ծախուող փլասթիքէ

զաւաթներով

սուրճի հոտը կոյր սրճեփին

որ դիմացի պատշգամէն ապօրինի ձեւով ճարուած ու

լուացքի թեյէն կախուած

դրօշակի գունատ լաթը

մէկ աջ մէկ ձախ կը թօթուէ

որուն հոգը

թէ դրօշակն այդ գողցուած

նշան է լոկ վարչապետին զօրակցութեան

եւ պիտի

փրթի ինչայ օր մը

անցորդներուն գլխուն անմեղ

ճօճանակուող չարչարանքէն իր խեղդուած:

Պուրճ Համուտը լուած է:

Բայց միշտ լուռ է թմրութեան դէմ իր սպաննող

աղմուկին դէմ յոգնեցնող

փողոցին մէջտեղը թաւլի կը խաղան ու դուն կը լուս

քէպապի ծուխով ննջարանդ կը մտնեն ու դուն կը լուս

ամբողջ տունդ կեղտաջուրով կը խեղդեն դուն կը լուս

միակ յստակ ու պերճախօս

պատասխանը թաղամասի խաղաղութեան

լուկիւնն է

այս օրերուն

եկուր գնայ դիմացի լուկիւնն ու մի ճշար

թաղին ծայրը

փերեզակի մուճակ հագած կատուներու ցեխոտ փտտած

պահուրտութիւն մաս կազմելով:

Պուրճ Համուտը լուած է:

Թաղին ծայրը աղբակոյտը փոքրիկ բլուր կազմած է

մահաթոյնէ դրոշմաթողթ փակցնելով

խաւարին մէջ բազմապատկուող կատուներու

երազներուն:

Ծեր շէնքերուն անթէնները երկնքին մէջ վիժած են

պաստառներուն խաբկանքը

երկնքի առեւտուրին ճրիաբար յանձնելով:

Քանի հոգի դուրսը մոռցած

կը գիջանայ այս պահուն  
բազկաթուռին մէջ ընկղմած  
սուտերուն իր հաւատալով:  
Քանի հոգի հիմա պառկած  
հոլիվուտեան կեղծ աստղերուն  
չորթիկները կամաց կամաց կը վերցնէ  
ու կը սառի իր հաճոյքէն թրփատուելով:

Ժամը մէկ է: Կէս Գիշեր:  
Հէտֆոններս ականջներուս պատշգամէն կախուեր եմ  
կատուներու սեռ մուրացող մլաւիւնին ականջ տալով  
Վէյվ Օչականն ու Դուրեանը  
սրտիս խորը  
լճակի մը թրաժէտին կը գրեն  
Քանի հոգի լուռ սիրեցին  
մեծ քաղաքի մեծ սէրերով  
յետոյ ինկան  
ոստրէներու չորցած-հինցած  
կափարիչներ հաւաքելով  
քանի հոգի  
ահագանգի խելառ-մելար ունոցի մը ականջ տալով  
կոշտուկ կապած բոպիկ ոտքով  
բեմ բարձրացան  
բարձախօսով ճառ կարդալու  
քանի հոգի կիրակնօրեայ բիժամայով  
քարոզ լսեց ու հայհոյեց  
եւ քանիներ ամէն տարի

խոր հաւատքով եւ լրջութեամբ  
տարեղարձի մոմեր բռնած  
հին «Վրէժ»ին յիշատակը դեռ կը յարգեն...

Պուրճ Համուտը լռած է:  
Բայց միշտ լուռ է աղէտին դէմ  
որ հարսի պէս ուրախ գուարթ կը պտտի իր թաղերէն  
ճիւերուն ալ հոգը չեղող  
քէֆի թմբուկ խաղցնելով:  
Ժամը մէկ է:  
Աղբատարը ահագնացող սպառնալիք կը կարդայ  
կատուներու

գլուխներուն մուրացկան  
ու կը խլէ անոնց ճանկէն  
խաղաքարտի պէս բախտաբեր  
պատառիկներն աւելցուքի:  
Ով պիտ' փրկէ  
կատուններուն վերջին ընթրիքն առատաձեռն  
ով պիտ փրկէ  
ականջներս հէտֆոններու լուռթենէն  
կատուններու փամփուռներէն  
սիրտս ծակող լճակին լուռ արտասուքէն :

Սոնիա Սանան

~ ՈՏԱՆԱԻՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ ~

Նոյնիսկ անտեսած չափահասների ներքին մանուկը, կրկին կը փաստուի որ մանկական գրականութիւնը մանուկները համար չէ միայն, քանի որ իրենք չափահասներն են գրողը, կարդացողը, մեկնաբանողը, եւ վերջապէս հաւանողն ու որոշողը թէ որը յարմար է ներկայացուի իրենց գաւակներին, կամ աշակերտներին, եւ որը ոչ, դեռ չխօսենք ամբողջ այն մանկական գրականութեան մասին, որ քաղաքական ճնշիչ միջնորդներում գրուել է փոխանցելու համար քողածածկ պատգամներ, ինչպէս Ս. Բէհրանգիի «Սեւ ձկնիկը», կամ Լ. Քարօյլի «Ալիսը հրաշագեղ աշխարհում»:

Ճրանսաբնակ Անահիտ Սարգսեանի հեղինակած մանկական չափածոյ ստեղծագործութիւնների պատկերազարդ «Պարոն Նիկողոս» կոչուող այս գրքոյկը, մէկն է այն շարքից որ ներկայացուել է «Բարեւ արեւ» մատենաշարով: Գիրքը պատկերազարդել է Գարեգին Մարտիրոսեանը եւ հրատարակուել է Երեւան, 2004 թուին:

Ո՛չ Ալիս, ո՛չ հրաշագեղ աշխարհ, բայց Պարոն Նիկողոս եւ Սփիւռք, ուր տասներկու ոտանաւորներով նկարագրուում է Պարոն Նիկողոսի արտաքինը, գործածած իրերը, վարքն ու բարքը, զբաղմունքը, ինչպէս եւ իր կաթողիկոս դառնալու երազանքը, սակայն ծերուկ Պարոն Նիկողոսը շուտով անդրադառնում է որ կաթողիկոս դառնալու համար նախ պէտք է դառնալ եպիսկոպոս, յետոյ արքեպիսկոպոս, ամենակարեւորը,

պէտք կարդալ Ագաթանգեղոս: Փորձում է, կարդում է, գլխին բան չի մտնում եւ հրաժարուում է կաթողիկոսութիւնից:

Գրեթէ բոլոր ոտանաւորներն էլ հետամուտ են մանկավարժական սկզբունքներին եւ մանկական քերթուածի արդիական մօտեցումներին՝ բառախաղ ու ձայնարկութիւն, ինչպէս եւ կրկնութիւն՝ միշտ վերսկսելով սկզբից, ամէն անգամ աւելացնելով մէկ մասնիկ, եւ աստիճանաբար վրայ-վրայի ամբողջացնելով մի պատկեր:

Հետեւեալ պատմութիւնը, որ կը մէջբերենք ամբողջովին փոխանցելու համար նաեւ այդ ոտանաւորի ընթերցումի հաճոյքը, նորէն հիմնուած է ձայնարկութիւնների, բառախաղերի, շրջադարձային կառոյցքի վրայ, այն տարբերութեամբ, որ այս մէկը կարծես մնում է թերի, անաւարտ. կասկածով միայն կարելի է ասել անաւարտ, քանի որ ենթադրելի է ընթացքը բազմաթիւ այն հարց ու պատասխաններն են որ բանաւոր կերպով պիտի շարունակուեն կարդացողի ու լսող մանուկի միջեւ, թերեւս հէնց դա է նպատակը:

Ի միջի այլոց, այս պատմութեան կոկորդիլոսը բազմալեզու եւ բարեկիրթ կոկորդիլոս է, բնաւ չնմանող մառնում ապրող եւ մեզ ուտեստեղէնից հեռու պահող այն կոկորդիլոսին՝ շատ հին բառ որ ժամանակին նշանակում էր կոկորդից արագօրէն բռնող իլոս որը ապրում էր չորս ոտքով չորս ոտք մեծութիւն ունեցող պահարանում եւ մեր մտքի մէջ պատկերուում էր որպէս քառասուն ոտքով քառասուն ոտք, ներեցէք, գազան... Կարդանք պատմութիւնը:



ՄՏԱԽՕ՞Մ ԹԷ ՇԱՏԱԽՕՍ

Պարոն Նիկողոս  
Անկողնէն ինկաւ  
խորո՛ւնկ փո՛ս:  
Այնտեղ գտաւ  
կանաչ կոկորդիլոս...

Ըսաւ.  
- Երկա՛ր պոչով  
Պարոն Կանաչ Կոկորդիլոս,  
այս ի՞նչ կ'ընէք դուք հո՛ւս,  
ելէ՛ք գացէք Եգիպտոս...

Երկա՛ր պոչով  
Պարոն Կանաչ Կոկորդիլոս,  
ելաւ գնաց Եգիպտոս:  
Լողա՛ց, լողա՛ց մինչեւ Նեղոս,  
դարձաւ շատախօս արաբախօս...

Շատախօս արաբախօս,  
երկա՛ր պոչով  
Պարոն Կանաչ Կոկորդիլոս  
ըսաւ.

- Չեմ ուզեր մնալ Եգիպտոս.  
կ'ուզեմ երթալ Լոս Անճելոս...

Շատախօս արաբախօս,  
երկա՛ր պոչով  
Պարոն Կանաչ կոկորդիլոս  
ելաւ գնաց Լոս Անճելոս:  
Լողա՛ց, լողա՛ց, մինչեւ ովկիանոս,  
դարձաւ անգլիախօս դասախօս...

Անգլիախօս դասախօս,  
շատախօս արաբախօս,  
երկա՛ր պոչով  
Պարոն Կանաչ Կոկորդիլոս  
անկողնէն ինկաւ  
խորո՛ւնկ փո՛ս:  
Այնտեղ գտաւ  
Պարոն Նիկիղոս...

Ըսաւ.-  
- Պարոն Նիկողոս,  
այս ի՞նչ կ'ընէք դուք հո՛ւս...

Խորո՛ւնկ փո՛ս,  
մէջը Պարոն Նիկողոս  
եւ  
երկա՛ր պոչով  
Պարոն Կանաչ Կոկորդիլոս:  
Մէկը շատախօս,  
միւսը ստախօս...  
Ո՞ր մէկը շատախօս,  
ո՞ր մէկը ստախօս...  
Այս ի՞նչ լաբիրինթոս...  
Այս պատմութիւնը  
թող վերջանայ ճիշդ հոս...

Ափսո՛ւ...

*Անկողին եւ փոս, հակասող երկու տեղեր, մէկը հան-  
գստաւէտ, միւսը՝ անհանգիստ: Նախ Պարոն Նիկողոսը  
ընկնելով փոսի մէջ հանդիպում է Պարոն Կանաչ Կոկոր-  
դիլոսին եւ հրահանգում է՝ «Այս ի՞նչ կ'ընէք դուք հո՛ւս,  
/ ելէ՛ք գացէք Եգիպտոս»: Պարոն Կանաչ Կոկորդիլոսը*

հնազանդւում եւ մեկնում է Եգիպտոս, մի շարք արկածախնդրութիւններից յետոյ, այս անգամ ինքն է ընկնում միեւնոյն փոսի մէջ, հանդիպում է Պարոն Նիկողոսին զարմանքով, եւ՝ «Այս ի՞նչ կ'ընէք դուք հո՛ւս...»

Համաչափութեան օրէնքի համաձայն որ նկատելի է պատմութիւնների մեծամասնութեան մէջ, պիտի ակնկալուէր որ Պարոն Կանաչ Կոկորդիլոսը իր հերթին ասէր՝ «Ելէ՛ք գացէ՛ք...» չգիտեմ ո՞ւր, թերեւս օս-ով վերջացող մի երկիր, որպէսզի ինքը, Պարոն Նիկողոսը եւս ունենար նմանատիպ արկածներ. այդ դէպքում շրջափոքը կը գծուէր ամողջովին, համաչափութիւնը կը կայանար, պատմութիւնը կ'աւարտուէր թերեւս բնական զարգացումով եւ ոչ թէ կտրուկ եւ անսպասելի որոշումով, կարծես խուսափելով ինչ որ խօսքից, տեղի տալով փսոսանքի:

Մանուկը հարց պիտի տայ՝ «Օրիորդ, ի՞նչու կոկորդիլոսը գնաց Եգիպտոս», կամ, «Պապա, – անշուշտ եթէ պապաները մի պահ կարեւոր ձեւացող գործերից անջատուած ժամանակ գտնեն իրենց գաւակներին պատմութիւններ կարդալու եւ մեկնաբանելու, – Ագաթան whatever ը ի՞նչ է»: Պատասխանները ինչ էլ որ լինեն պիտի առաջնորդեն մտքերի փոխանակումի եւ երկար գրոյցների՝ այսինքն պատմութիւնը յաջողած եւ ընդհանրապէս գիրքը հաճելի:

Գորգէն Արզումանեան

## ~ ՀՅՈՒՍՆԿԱՐ ~

Հակառակ անոր որ տակաւին շատ չէր անցած բայց կարեւոր էր սկսիլ այնտեղերէն ուր վերջին անգամ ձրգած էի: Ոչ թէ յիշեցնելու եւ կամ ձգած տեղէս շարունակելու համար, ո՛չ, այլ պարզապէս հասկնալու համար նախ ձգած ըլլալու եւ անշուշտ ձգած տեղիս պատճառը: Յոգնակին այստեղ ընդհանրապէս ընդունուած վայրը ժամանակով բազմապատկելուն չէ որ կ'ակնարկէ, այլ պարզապէս մօտաւորին:

Ամիսներ առաջ, երբ տակաւին այս կողմերը հաստատուելու որոշումը ոչ միայն առած չէինք, ոչ իսկ միտքերն էս անցուցած, նոյնիսկ հեղնական՝ մերժած, ասանկ classe ունեցող տեղ մը մարդ կը ձգէ ալ Լոս Անճելոս կ'երթա՞յ. այս պարագային առաջին անգամը պիտի չ'ըլլայ որ յոգնակին ուրիշներ ալ կ'ենթադրէ, նոյնիսկ անոնց որոնք պաշտօնապէս գաղթական չեն կրնար համարուիլ, բայց եւ այնպէս անոնց ծննդեան վայրը, վկայագիր տուող պետութիւնները, հպատակութիւնը, պատկանելիութեան մը հրամայականը, յաջողութիւններն ու ձախողութիւնները, կիրքերն ու իղձերը իրենցը չեն, այլ կը պատկանին գաղթակայանէ գաղթակայան, կամայ ակամայ, շարկուած պտոյտի ելած դատի մը, որուն ժառանգորդները ատենին յստակ սահմանելէն ու անուանելէն ետք copyright ը առած էին, եւ որ ամէն նոր սերունդի հետ սերունդ մըն ալ հինցած, քիչ մը աւելի կուռքացած, դաւադիրի արդարութեան պատիւի գոհո-

դուլթեան հիւսիս հարաւ արեւելք արեւմուտքի վեր ու վարի մէջտեղերը տեղ մը, յօնքերը կիտած՝ խիստ-խիստ սաստելով կը շարունակեն պաշտպանել: Անունն ու մականունին շառաւիղը արօրը արհեստը սիրած գոյն-գզոյնները արահետներն ու խնձորի ծառին տակը առաջին անգամ սիրուրտիլը սեփական շունչը օրը երկվայրկեանը անձնական ամայի առանձին մահը, պարզեցուած, ամփոփուած, միուլթեան գօրուլթեանը անըմբռնելի հսկայական թիւին մէջտեղերը կորսուած, եւ օրացոյցէն գոհուած թուականի մը մէջ սառած: Package deal.

Ուրեմն բացայայտ պէտք է ըլլայ չէ՞ թէ հագիւ բաւարար ժամանակ անցած է:

Կէսօրուայ դադարէն ետք առաջին պահուն, Ֆրանսերէնով շինուած աշխարհին աշխարհագրութեան՝ դասագրքերու փայլուն էջերուն, ձախ կողմի վերէն վար երեք գունաւոր նկարներէն մէկուն մէջ ճանճերու չափ երեւցող աշխատողներուն, ճանճերն ալ նկարուած ըլլալու են բայց ինչպէս միշտ չեն երեւիր, չնաշխարհիկ ճարտարութեան անացած յառաջդիմած նաւահանգիստի մը կողքին ինքզինքդ գտնալու պէս բան մը: Նաւահանգիստ ըլլալու նշումը կարեւոր է որովհետեւ տեղւոյն նշանաւոր ազատամտութիւնը աւելի կը պարտի ամիսներէ ովկիանոսները նաւարկելէ ետք ցամաք թափած նաւաստիի բարոյականին քան թէ հովուապաշտ dead beat բանաստեղծներուն:

Թիքէթը կտրած ժամանակդ, գրած ատենդ անշուշտ

կ'անդրադառնաս որ կրնայիր նաեւ միտքէդ տոմսակ անցնել, նոյնիսկ եթէ առուծախը արաբերէնով պիտի ըլլար. այն ատեն Սան Ֆրանսիսքոյ ըսած էինք իրենք ալ տպագրած էին եւ ըստ այնմ օդանաւի ընկերութիւնն ալ առած, երկուական վալիզ մէկական ձեռքի պայուսակ, դրամատիրական մրցակցային կարգապահութեամբ բերած հասցուցած՝ ու ձգած գացած: Չէ, Լոս Անճելոս չէ. հոն մէկը չունինք:

Միտքէդ արդեօք որ տառատեսակը կը գործածես, հայերէն unicode կամ ֆրանսատառ՝ անգլերէն առողանութեամբ:

Առաջին գաղթականը, քուկդ չէ այլաւ, պատիժմատիժ, ձուլում ալ աչքդ առած, ձգած, ճամբայ ելած, կէս արթուն, շշմած, մտահոգ, գրգռուած, արկածախնդիր, գրօսաշրջիկութեան ճիշդ հակառակը, թուղթերուդ հետ Պուտտային պէս մէկ եղած, աչքերդ տասը բացած, ոչ մէկ կապ աչքերդ բաց երազելուն հետ, բան մը որ դասի պահուն ալ չեմ գիտեր ինչու չէին արտօներ:

Այս մէկը սակայն որոշում էր: Փոխադրուելու լուրջ որոշում, հասուն, մտածուած, պապա մամա եղողի որոշում, նիւթական տնտեսական բարելաւման հեռանկարներով. գործ դրամ տուն: Օձիք ազատելու հարց չկայ այլեւս, ոչ ալ նոր մահավայրերու փնտռուէք: Հոնտեղի Տէր Հայրն ալ արդէն շատ բան չի գիտեր մեր մասին, ոչ այնքան որքան ըսենք հոգաբարձութեան մը ատենապետին կամ ժողովրդային տան մը ղեկավարին կամ ալ ազգային բարերարի մը, այնպէս որ հանգուցեալ

դամբանական է մը ավելի սպասելը քիչ մը ավելորդ էր, քիչ մըն ալ, դասակարգային իմաստով՝ անպատշաճ:

Եւ վստահ չեմ. տակաւին մտքերնուս մէջ յստակ չէ. քով քովի կուգանք բայց ատոր մասին չենք խօսիր. չենք ուզեր խօսիլ, թէ ինչ ըսել է վերապրած մեծ հայր մը եւ մէկական մեծ մայր հոն թաղած ձգել ու հեռանալը: Տակաւին բառը չկայ

այն ատեն չես անդրադառնար, բայց վերջնականութեան հետ հաշտուելու հարց մը կայ. ամման չընես հա՛, վերջը մինչեւ կեանքիդ վերջը կը գղջաս: Բան մը որ պարզ, խմբագրուած գղջումնագիր մը ստորագրելով ալ չի վերջանար: Այն ատեն անոր մասին չէիր մտածեր: Առանց անդրադառնալու որ շնչելու շուրջ կուտակուած ամէն ժամ ժամանց եւ արդուզարդ, կախ կլիր լոգունգ, անհեթեթ պիտի ըսէի եթէ Մանթարին խաշուած հայերէն որակումէն չքաշուէի, այլեւս գունամթափ լիկած անթացուպերու յենած քայլերգներուն, գրաբար կամ լուրջ մտաւորական գաղափարաբանական հոտող կամ ալ նոփ նոր թարգմանուած ու տակաւին լեզուին մէջ բաւարար չապրած, շինծու բայց կաշին հաստցուցած, եւ կամ անշուշտ լաստիկով բիժամայի մը պէս հանգիստ ազատ համարձակ տուն տեղ գտած, սակայն տակաւին պատկառելի սուղնոց հոտող մեծ մեծ բառերու հիւսած դաւադրութիւններով, սկզբունքային նետել բռնելներուն ետեւները տեղ մը պահուրտած:

Այսինքն, աստեղէն անտեղէն հաւաքուած յարմարցուած արդարութիւններու անկախութիւններու իրա-

ւունքներու թուրջի դրուած սահմանումներով օրը օր ընելով տուն եկած եւ երեկոյեան լուրերու համեմատականներուն ճիշդ եզրին նստած սիրելի հեռուստադիտողները: Յիշեցում մը որ յանկարծ մարդիկ, արդէն իսկ հողաթափներ հագած, չկարծեն որ դիտածնին սառնարանն է կամ լուացքի մեքենան: Իսկ հոս յոգնակին վստահեցնելու համար է որ հակառակ անոր որ այդ վայրկեանին գիրար չեն տեսներ, այսինչին այնինչն ալ չեն, այս աշխարհին մէջ բոլորովին առանձին չեն մնացած. որ վերջին նորոյթէն, տախրմ գրավաթով, ուղիղ եթեր կամ որպէս այդ քալեցուած, իրենց մասին կամ նոյնիսկ իրենց պէս մտածող, մտահոգութիւնները բաժնող, գիրենք սիրող, հետերնին տառապող եւ անկողին դնող մէկը կայ: Մերին կեանքը ավելի հաճելի դարձուցած գիտութեան հնարած բազմաթիւ մեքենաներէն մէկը եւ կամ հարսնիք պարահանդէսի մեզէները:

Վայրկեանէն մէկն ալ լուրջ մտահոգութեան եւ անափառութեան միջեւ ֆրանսական գիրքեր լեցուցած էի, եւ օղակայանէ օղակայան, երրորդ աշխարհէն մինչե՛ւ առաջինները շալկած բերած: Այդ լեզուով չէ՞ր որ նորաձեւութիւններն ու ապրելակերպը, գաղափարներն ու պիքինին, քունուրտուքի ազատագրումը եւ թշուառները, եկած հասած էին նոր նոր անընդունելիներուն հետ միասին: Կարելոր էր տաս տափակ ամբերիկացի չըլլալու համար: Նոր եկած ենք ամմա մեզի խիարի տեղ չդնէք հա՛:

Բան մը որ պէտք ալ չեղաւ. առաջին աշխատած

տեղէս կէս թաղ վեր եւրոպական գիրքերու գրախանութ մը կար որ ամէն ինչ ունէր, նոյնիսկ ինքնահասանութիւնը:

Քաղաքը շատոնց, կամաց կամաց, գաղտնի, անգիտակցաբար պիտի ըսէի եթէ այդպիսի բան գոյութիւն ունենար, պատիկցած էր: Մտքիդ մէջ բաւելու չափ պատիկցած: Այլեւս առանց քարտէսի, հաշիւի, ճամբայ կրնայիր իյնալ. պէնզինիդ հաշիւն ալ գիտէիր ընել: Ինքզինքդ տեսակ մը ճերմակի տեղ դրած վտանգաւոր կամ ապահով թաղամասերն ալ գանազանել: Ճիշդ է հետդ բերած բանայլի մը, cow boy ի գօտիդ, քշելու տետրակդ, հին բասբորդ, շատոնց մոռնալ ուզած վիճակացոյց մը փոխադրութեան ատեն աստեղէն անտեղէն մէջտեղ կ'ելլեն, ամէն փոխադրութեան հետ քիչ մը կը թափես քիչ մը կը ձերբազատուիս, որպէս հաւկիթի քարթոն վերածնելու կը դրկես, երթալէն աւելի կը խտացնես, ձգելիք յիշատակներդ, յիշատակելիներուդ ցանկը, հնութիւններդ կը մաղես կ'ամփոփես, անպաշտօն կենսագրականիդ բնագրին ենթահողը ըրթուշ կ'ընես, կը պատրաստես, ամէն նկարուելուդ ինքզինքդ քիչ մը աւելի կը շտկրտես, նայ-ուածքիդ կեցուածքիդ մէջ քիչ մը այսինչ կամ այնինչ դերասանէն գրողէն կը խառնես, պատշաճ լուսաւորումով: Գաւառէդ ելած ու, մթնշաղէն երթալէն խոր մութը գացող մոլորակային գիւղը փոխադրութեանդ ընթացքին, ամէն ըսածդ տեսածդ

ըրածդ տեսնել լսել արձանագրել կրցող բռնի փրկարարներուդ արկղերը լեցնելէդ ետք, աւելցածը, եթէ յանկարծ անուշադրութեան մէկ վայրկեանիդ պատկան մարմիններէն մէկուն չյանձնես, կը մնայ քեզի:

Ակն կալ ել ան ակն կալ ա ծ ակն արկ ախ

Հրայր Անմահունի

~ ԲԱՂԱԼԸ ՄԷՁՍ ԿԸ ԲԱԼԷՐ ~

Տարիներով երազներուս յաճախանքն էիր. կը քայլէի յիշողութեան ճամբաներէն, գոց շուկաներու հոտերով լեցուն մայթերովդ: Դուրսը անձրեւ էր, տամուկ գինովութիւն մը խունացած նկարներու գոյներով: Վերջալոյսի շողերդ կոպերուս տակ կը յամենային:

Տարիներով վերադիտեր եմ աւերումիդ ժապաւէնը՝ մտքիս մէջ կրկնագրուող: Պայթումին ժամանակը երբեք կանգ չէր առներ: Երբ բոցերը կը վառէին, չէինք լսել ճարձատիւնը հրդեհներուդ: Հովը միայն հրկիզումիդ ծուխը մեր կողմ կը բերէր: Կը կենայինք պատըզ-գամը ու ժամերով այրող հանկարները կը դիտէինք, մինչ ծովը ետեւդ կէսօրուան արեւուն տակ կապոյտ-կապոյտ կը նիրհէր: Տօթը մեր գանկերէն ներս կը թափանցէր: Կը շարունակէինք հիւսել վերադարձիդ երազները ու հաւատալ հրադադարի վերջին լուրերուդ: Յոյսի թեւածող պատրանք կամ խելագարութիւն: Չէինք զգար որ խաղը շատոնց վերջ գտած էր, դերակատարները բոլորը փախած կամ մեռած: Միայն աւերակներուդ շուքերը կը մնային, անվերջ երկարող փողոցներուդ մէկ ծայրէն միւսը: Քանդուող քաղաք, ծակծկուած շէնքերդ ամէն ումբակոծումի հետ քանդակուող մէկական նահատակաց յուշարձան, կը դառնայիր բացօդեայ գերեզմանը անոնց ձեւագեղծուող կմախքներուն:

Տարիներով կրկներ եմ փողոցներուդ անունները.

Ալլէնպի, Ֆօշ, Խանտաք-ըլ-ղամիք...: Անոնց տեղերը անգամ չէի յիշեր: Քանի անգամ նստեր եմ սեղանին առջեւ ու փորձեր գծագրել քարտեսը ճամբաներուդ. օթոքարը դպրոցին առջեւէն վեր կ'ելլէր, ձախ կը դառնար, արդուկիչի խանութէն աջ, ապա մեծ դպրոցի պատին տակէն մինչեւ թեքուէր կրկին ձախ ու իջնէր դէպի օթոսթրատ: Այսքանը կը յիշէի: Ու կը քայլէի անընդհատ յաճախանքի փողոցներէդ, կլոր-կլոր դառնալով, առանց երբեք տեղ հասնելու: Քաղաքին անցքերը մէկ կողմէն միւսը կը մնային փակ, յիշողութեան դաշտերը ականուած: Ո՞ւր փնտռէի քեզ: Քաղաքս էիր, բայց չէի յիշեր քեզ: Երբեք այդքան մօտիկ ու այդքան հեռու չէինք եղած միաժամանակ: Այրած ինքնաշարժներ ու աւազաթումբեր կը բաժնէին մեզ ու կը միացնէին նոյն ատեն: Ամէն գիշեր առանց լուրի ումբակոծումը կը վերսկսէր: Հաուն, Կրատ, Օրկ Սթալին պատնէշներուն վրայէն սուլելով կ'անցնէին, ինձմէ քեզի կամ քեզմէ ինծի եկող այցելու՝ թակարդուած նուէրներ բերող:

Փողոցներդ հագիւ թէ կը գծագրուէին յիշողութեան անցարգելներուս մէջ, ու չէին տաներ ոչ մէկ տեղ: Ո՞վ գիտէր թէ ինչեր կային աւագի տոպրակներուն ետեւները: Ո՞վ կը համարձակէր անցնիլ հողաթումբերէն անդին: Ձանգակներդ կիրակնօրեայ լուծ էին, մուսնե-տիկներդ պապանձած կամ գարնուած ու մինարէթներէն կախուած: Յիշողութեան անժամանակ առկա-խում: Անունդ չէր գար լեզուիս վրան: Միայն ձգած պա-

րապղ, ցած պատերու տակէն անցնող կռուողներ, իրենք-իրենց նետած շուքերուն վրայ կրակող:

Մարդիկ կը շարունակէին խօսիլ փողոցներուդ մասին: Օթոմաթիքէն մինչեւ Աուլքէն ու Ռիվոլի՝ մի-թական վկայակոչումներ ըլլային կարծես: Ամէն պատմող շերտ մը եւս կ'աւելցնէր այս կամ այն պատումին վրայ: Կայր իրենց յուշերուն մէջ, կ'ապրէիր: Փորձեր եմ երեւակայել քեզ առկախումէն առաջ, յիշել անունդ կոտորակուած: Փորձեր եմ տեսնել քեզ ու գտնել ուրիշ երկնակամարներու տակ: Յաճախ ճամբաս կը շեղէի փողոցներուդ հագիւ թէ նմանող քանի մը թաղերէ կրկին ու կրկին անցնելու համար: Մէջս էիր եւ ուր որ երթայի քեզ կը փնտռէի: Սակայն ի գուր: Կը լռէիր պարզապէս, անյատակ հորի մը նման, որուն մէջ ա'լ կը դադրին քարեր նետելէ:

Չեմ մոռնար երբեք երբ առաջին անգամ քայլեր եմ մայթերէդ, մանկապարտէզի գոգնոցով, մէկ ձեռքիս պայուսակ, միւսին սակառ: Դպրոց կ'երթայինք միասին ու մայրս ձեռքէս ամուր կը բռնէր որ ձեռքը ձգելով չփախչիմ: Դժկամելով կ'երթայի, բայց հագիւ քանի մը քայլ առած, շէնքերդ կը սկսէին դիտել զիս, ժպտալ ու աչք ընել: Հետս կը քայլէիր, ես կլանուած ամէն քայլափոխի փոխուող դէմքերով ու նայուածքներով շէնքերուդ, դուն կատակելով ու ամէն անկիւնադարձի աչխփուկ խաղալով հետս: Աչքերս կը թարթէի ականթարթի

մը համար, կը գոցէի ու ետ կը բանայի անմիջապէս: Կը շարունակէիր նայիլ ինծի, ամէն անգամ տարբեր դիմակ հագած: Բաց ու գոց պատուհաններդ, գոյնզգոյն փեղկերդ, բազրիքներու մետաղեայ կամ քարէ հիւսուածքներդ, պատշգամներէն կախուած երկար ու զծաւոր վարագոյրներդ աչքերուս մէջ կը տողանցէին, ականջիս փսփսալով ու պատմութիւններ պատմելով:

Այսօր ալ կը քայլեմ ականարկս միշտ շէնքերուդ յառած, գլուխս օդին մէջ, պատուհաններուն ետեւ քեզ փնտռելով: Նոյն շէնքերդ են, նոյն թաղերը՝ կարծես: Դուրսէն գոնէ այդպէս կը թուին: Կը համրեմ մինչեւ տասը ու կը սպասեմ որ դուրս գաս պահուրտուքի խաղէդ ու ժպտաս կրկին անցորդիդ: Այսքան տարի ետք ով գիտէ պիտի ճանչնա՞ս զիս: Բնակիչներդ կանուկ լքեցին քեզ, ահ ու սարսափի սկզբնական օրերուդ: Անոնք որ մնացին հաւանաբար չկան այլեւս: Նորէն կը գոցեմ աչքերս ու կը փորձեմ յիշել առաջին օրերուս քաղաքը: Կը փորձեմ տեղադրել յիշողութեանս քարտեսը փողոցներուդ այսօրուան կերպարանքին վրան: Նոյն ճամբաներէն կը քայլեմ, ետ ու առաջ, բազմաթիւ անգամներ, մասնաւոր ու շաղրութիւն դարձնելով անշարժ մնացած չնչին բեկորներու գոյութեան: Շատ քիչ հետքեր կը մնան այդ օրերէն:

Վարդագոյն շէնքը, ուր ծնած եմ, իր չորս յարկերով ու փառաւոր պատշգամներով, ամենահին կանգուն

կառուցյն է հաւանաբար թաղին մէջ: Կ'անցնիմ առջեւէն բազմաթիւ անգամներ: Կը նկարեմ: Կը մօտենամ անոր մոտաքին: Երկաթէ ծանր դարպասը փակ է: Անոր ետեւ նեղլիկ արահետ մը կ'անցնի պարտէզէն ու կը տանի մինչեւ մոտաքի աստիճանները: Կը նայիմ պատուհաններուն, փորձելով կենդանի շունչի նշոյլներ որսալ հոս ու հոն: Բնակուած կ'երեւի ու հրաշքով փրկուածի տեսք մը ունի: Մինչ կը յիշեմ զինք իբրեւ փողոցին իշխանուհին, այսօր պարզապէս գաճաճն է թաղին, ամէն կողմէ շրջապատուած բարձրադաս շէնքերով: Բայց կը պահէ հին օրերէն վսեմութիւն մը գաղտնի, անչափար գրաւչութիւն մը վայելչօրէն ծերացած գեղեցկուհիի մը: Կը դիտեմ քեզ փողոցին անկիւնէն: Չես նայիր ետ: Կը մրափես կարծես հին օրերուդ տեսիլքներով: Երազներուդ մէջ ով գիտէ ի՞նչ մղձաւանջներ կը հալածեն քեզ: Հրաժեշտ կ'առնեմ քեզմէ, կամացուկ մը կը հեռանամ:

Հետագայ օրերուն բազմաթիւ անգամներ պիտի անցնիմ փողոցներէդ ու ամէն անգամ որ մօտդ ըլլամ, պիտի այցելեմ քեզ, գուցէ հեռուէն նայիմ, ժպտամ, թէ-կուզեւ չնայիս ետ, չտեսնես զիս: Չեմ կորսնցուցած քեզ: Կաս: Այդ ալ ինքնին մեծագոյն բախտ մըն է, այս կործանած ու վերածնեալ քաղաքին մէջ մեծագոյն մխիթարութիւն մը:

Տարիներով երազներուս յաճախանքն էիր. կը քայլէի հետդ, յիշողութեան ծանօթ ու անծանօթ ճամբաներէդ:

Չորս բոլորդ ամայութիւն էր, սաստիկ ումբակոծումի յաջորդող լռութիւն: Առտունները մարդիկ հագիւ կը համարձակէին դուրս ելլել իրենց ապաստանարաններէն, քննելու համար աստիճանական աւերումիդ ձգած նոր շերտը իրենց տուններուն վրայ ու մարմիններուն: Մոռացութեան փոշին տակաւ առ տակաւ կը նստէր ու կը ջընջուէիր ամէն մեռնողի հետ, ամէն փուլ եկող շէնքի:

Տարիներով քալեր եմ աւրուող քարտեսիդ փողոցներէն, միշտ փորձելով յիշել ու վերյիշել թէ ճամբաներդ ո՞ւր կը տանէին: Ի՞նչ գաղտնիք կար անոնց անհետացող եզերքներուն ետեւները: Չեմ անդրադարձած որ այսքան ատեն է, մինչ երազիս ժպտաւէնը անընդհատ կը կրկնուէր, գոյներդ կը վառէին ու կը մարէին մտքիս պաստառին վրայ, կը շարժէիր մէջս կամաց-կամաց ու անգիտակցաբար: Կը կերպարանափոխուէիր: Քաղաքը մէջս կը քայլէր:

Րաֆֆի Աճէմեան